ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

13.08.2020թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 95-99 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2020 թվականի մայիսի 25-ի թիվ 407-Ա որոշումը՝

ՀՀ Լոռու մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ Ալիկ Սահակյանի (հանձնաժողովի նախագահ), ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի պետ Ժիրայր Ղազարյանի, ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Դավիթ Թամարյանի, ֆինանսատնտեսագիտական բաժնի ավագ մասնագետ Լուսինե Պապյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի ավագ մասնագետ Դավիթ Ստեփանյանի, քաղաքաշինության վարչության ավագ մասնագետ Արման Մխիթարյանի, զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Սպարտակ Ղուբաթյանի, մարզպետարանի փորձագետ Լևոն Բերոյանի, սոցիալական ապահովության բաժնի ավագ մասնագետ Գայանե Բոջուկյանի, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների բաժնի ավագ մասնագետ Անի Ղազարյանի, գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ Արմեն Գասպարյանի, գյուղատնտեսության բաժնի ավագ մասնագետ Արշակ Բաղդասարյանի, տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի ավագ մասնագետ Վահրամ Դանիելյանի և կրթության բաժնի գլխավոր մասնագետ Անահիտ Բարոյանի կողմից իրականացվեց իրավական և մասնագիտական հսկողություն ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքում՝ ՏԻՄ-երի լիազորությունների, ֆինանսների, հողօգտագործման, կոմունալ տնտեսության, պաշտպանության, սոցիալական պաշտպանության, գյուղատնտեսության, անասնաբուժության և բուսասանիտարիայի, առևտրի և ծառայությունների, կրթության և տրանսպորտի բնագավառներում, ինչպես նաև մեկ նախադպրոցական ուսումնական հաստատությունում:

1. Իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Նշումներ /համայնքի ղեկավարի առարկությունները իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և իրավական և մասնագիտական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/

_____

_____

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Լոռու մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Շիրակամուտ համայնքի ղեկավարին:

Ալիկ Սահակյան _____

Ժիրայր Ղազարյան _____

Դավիթ Թամարյան _____

Լուսինե Պապյան _____

Դավիթ Ստեփանյան _____

Արման Մխիթարյան _____

Սպարտակ Ղուբաթյան _____

Լևոն Բերոյան _____

Գայանե Բոջուկյան _____

Անի Ղազարյան _____

Անահիտ Բարոյան _____

Արմեն Գասպարյան _____

Արշակ Բաղդասարյան _____

Վահրամ Դանիելյան _____

Համայնքի ղեկավար՝
Աշոտ Երանոսյան _____